ՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՆ ԸՆՏՐԵԼ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Յօդուածը պատրաստ էր տպագրութեան, երբ ՀՀ ԳԽ նախագահն այցելեց Նովո Ղզարյովո։ Այսուհանդերձ հեղինակի մտորումները որոշակի հետաքրքրութիւն են ներկայացնում։

Մէկ տարի առաջ ժողովրդավարական ուժերը յաղթանակ տարան հանրապետութեան Գերագոյն Խորհրդի ընտրութիւններում եւ փոխարինեցին համայնավարական իշխանութեանը։

Ինչի՞ են հասել նոր իշխանութիւնները մեր ժողովրդին յուզող խնդիրների լուծման ուղղութեամբ եւ ինչպիսի՞ն են հնարաւոր հեռանկարները։

Սկզբունքօրէն նոր իշխանութիւնները կարող էին որդեգրել երկու քաղաքական գիծ։

Առաջին՝ ելնելով մեր ժողովրդի արցախեան հատուածի ծանրը դրութիւնից եւ դեռեւս ուժեղ կենտրոնի որոշիչ դերից, եթէ ոչ այդ հարցի լուծման, ապա գոնէ Արցախը հայկական պահպանելու գործում, կենտրոնի յատկացրած միջոցներով աղէտի գօտու շուտափոյթ վերականգնման, հանրապետութեան առայժմ խիստ միակողմանի զարգացած տնտեսութիւնը կենտրոնական մատակարարումներից չզրկելու անհրաժեշտութիւնից, առայժմ կոռէկտ քաղաքականութիւն տանել կենտրոնի նկատմամբ եւ կատարելով ներհանրապետական ժողովրդավարական փոփոխութիւններ, օգտագործել ինքնիշխանութեան մեծացման եւ արտաքին կապեր ու յարաբերութիւններ ստեղծելու հնարաւորութիւնները։

Երկրորդ՝ հակադրուելով փոքրը ինչ ժողովրդավարայնացուած, բայց դեռեւս բոնապետական նկրտումներ ունեցող կենտրոնին, արմատական փոփոխութիւններ կատարել հանրապետութեան տնտեսական եւ քաղաքական կառուցուածքներում, նպատակ ունենալով շուտափոյթ կերպով դուրս գալու ԽՍՀՄի կազմից եւ ձեռք բերելու իրական անկախութիւն, չնայած որ դա հասկանալիօրէն կը ծանրացնէր հանրապետութեան տնտեսական վիճակը, աղէտի գօտու վերականգնումը եւ բացասաբար կ'ազդէր Արցախի խնդրի վրայ։

Նոր իշխանութիւնները ընտրեցին երկրորդ ուղղութիւնը եւ այսօր արդէն ակնյայտ է, որ այդպիսի քաղաքականութիւնը հանրապետութեան ներքին տնտեսական եւ քաղաքական կեանքում իրական տեղաշարժերի հետ մէկտեղ յանգեցրեց նաեւ ծանր հետեւանքների, յատկապէս արցախահայութեան պայքարի հարցում։ Եթէ նախկինում կենտրոնը չլուծելով Արցախի դիրքը, այն պահպանում էր (այսինքն՝ պահպանում էր հայկական Արցախը) որպէս խաղաքարտ անհրաժեշտութեան դէպքում Հայաստանի կամ Ադրբեջանի վրայ ճնշում գործադրելու համար, ապա Հայաստանի նոր քաղաքականութիւնից ելնելով ակնյայտօրէն անցաւ դեռեւս «համայնավարական» Ադրբեջանի կողմը, նրան տրամադրելով իր ոչ միայն քաղաքական ու տնտեսական, այլեւ ռազմական օգնութիւնը՝ Արցախը հայաթափելու համար։ Բնականաբար հարց է առաջանում՝ ժամանակը չի՞ արդեօք որոշակի շտկումներ մտցնելու հանրապետութեան քաղաքական այս գծում եւ ի՞նչպիսին պէտք է լինի այն հետագայում։ Այս խիստ բարդ հարցում հնարաւորին չափ ճիշտ եզրակացութեան յանգելու համար անհրաժեշտ է նախ վերլուծել ԽՍՀՄի հետագայ ճակատագրի քիչ թէ շատ հնարաւոր տարբերակները, որոնք ըստ երեւոյթին, երեքն են։

Առաջին՝ դեռեւս իրենցից իրական ուժ ներկայացնող պահպանողական ուժերը, որոնք ունենալ մեծ թւով համախոհներ զինուորականութեան շրջանում, կարող են փորձել վերականգնել համայնավարական բոնապետական կարգերը, թէեւ յաջողութեան հնարաւորութիւնն այս դէպքում հիմայ մեծ չէ։

Երկրորդ՝ հանրապետութիւնների անկախութեան ձգտումը եւ նրանց միջեւ եղած հակասութիւնները կարող են յանգեցնել ԽՍՀՄի կազմալուծմանը, որը կը վերածուի ազգային հակադրութիւններով տոգորուած, բայց տնտեսական յարաբերութիւններ ունեցող 15 պետութիւնների։

Երրորդ՝ հանրապետութիւնների առաւել հանդուրժողական քաղաքականութեան դէպքում ԽՍՀՄը ոչ շուտ, բայց աստիճանաբար կարող է վերածուել տրնտեսական սերտ կապերի մէջ գտնուող տասնհինգ ինքնուրոյն պետութիւնների, մօտաւորապէս այնպիսին, ինչպիսին է այժմ Եւրոպական Ընդհանուր Շուկայի անդամ պետութիւնների համակարգը։

Վերջին ամիսների դէպքերի զարգացման ընթացքը, յատկապէս Ռուսաստանում ժողովրդավար ուժերի յաղթանակը, ինչպէս եւ ԽՍՀՄի նկատմամբ արտաքսամանեան զարգացած երկրների դիրքորոշումը ցոյց է տալիս, որ առաւել հաւանական է վերջին տարբերակը։ Ելնելով սրանից, ըստ երեւոյթին, անհրաժեշտ է վերապահումներ կատարելով որոշ կէտերի նկատմամբ, թէկուզ ուշացումով՝ համաձայնուել ստորագրել միութենական պայմանագիրը։ Ուշացումով, քանզի եթէ համաձայնութիւնը տրուէր աւելի շուտ, ապա չէին լինի այն մեծ կորուստները, որ մենք ունեցանք վերջին ամիսներին՝ Արցախի եւ Շահումեանի շրջանի դատարկուած հայկական գիւղերը, կորսուած Գետաշէնն ու Մարտունաշէնը, մեծաթիւ զոհերն ու պատանդները, աւերուած սահմանամերձ գիւղերը։ Վերջին բոնազաղթումները էապէս տարբերւում են եւ շատ աւելի ծանր են մինչ այդ եղածներից։ Եթէ Սումգայիթի, Բաքուի ու Գանձակի բոնազաղթումներն ու ջարդերը անձնական դժբախտութիւններ ու դժուարութիւններ էին մեր հայրենակիցների համար, ապա ներկայ բոնազաղթը նաեւ հողի կորուստ է, հայաբնակ հողի կորուստ, Հայաստան աշխարհի փոքրացում։

Զանազան գերագոյն խորհուրդներն ու գորբաչովները, ուշ կամ շուտ անկախանալը ի վերջոյ անցողիկ երեւոյթներ են, իսկ հողի կորուստը, նրա բոնազաւթումն ու հայաթափումը անդառնալի, վերջնական կորուստ է, ուստի մեր գերագոյն խնդիրը պէտք է լինի նրա պահպանումը ամեն գնով եւ միւս բոլոր, թէկուզ շատ կարեւոր, խնդիրները պէտք է յետաձգել հանուն հայաբնակ հողի պահպանման։ Այս բանը լաւ են հասկացել մեր հակառակորդները։

Բաքուի Յունուարեան դէպքերից յետոյ, զգալով, որ կենտրոնը դեռեւս բաւականաչափ ուժեղ է ու հետեւողական եւ իր անջատողական, հակակենտրոն նկրտումները կարող են յանգեցնել մեծ զոհերի ու Արցախի կորստի, իրատես Ադրբեջանը համարեա ամբողջութեամբ համայնավարական զգեստներ հագնելով անցաւ կենտրոնանուէր քաղաքականութեան եւ դրա շնորհիւ այժմ ռուսական զօրքի ձեռքերով է իրականացնում իր հակահայկական անմարդկային պլանները։ Հետագայում երբ կենտրոնը թոյլ կը լինի եւ լուծած կը լինի Արցախի հայաթափման հարցը, Ադրբեջանի քաղաքական դէմքը կարող է փոխուել մէկ գիշերուայ ընթացքում, ինչպէս եղաւ 1920 թուականին, երբ Ադրբեջանը ընեց մուսաֆաթիստական եւ արքնացաւ բոլշեւիկեան։ Քաղաքականութեան նշուած շտկումը բնաւ չի նշանակում հրաժարուել անկախութեան ձգտումից։ Անկախութեան հասնելու գործընթացը մեզանում շատ է առաջ գնացել եւ նրա կասեցումը կարող է ողջ աշխարհի աչքում բարոյական ծանր վնաս հասցնել մեր ժողովրդին։ Սեպտեմբերի 21ին հանրաքուէին մեր ժողովուրդը պէտք է միահամուռ «այո» ասի անկախութեանը եւ դա չի հակասի այդ շտկմանը, քանի որ ամենայն հաւանականութեամբ դէպքերը ԽՍՀՄում կը զարգանան այնպէս, որ հետագայ հինգ տարիների ընթացքում անկախութեան մեր գործընթացը համահունչում կը լինի միութիւնում ընթացող պրոցեսների հետ։

Ապագայ սերունդները մեզ չեն ների, եթէ ներկայ սերունդը մի ժողովրդի, որը լուրջ դասեր պէտք է քաղած լինէր դարասկզբի եղեռնից, դարավերջում չկարողանայ իր ճկուն քաղաքականութեամբ պահպանել լեռնային եւ դաշտային Արցախի հայաբնակ տարածքները եւ ի վերջոյ չվերականգնի իր անկախ պետականութիւնը։